

1. Մտաւարձա

(Պրագտ)

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎ. ԻՍԱՀԱՅԱՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ («Արու-Լալա Մահարի» պոեմի լավ-իմաստային վերլուծության փորձ)

Հայ զրականության նկատմամբ հաճախակի ընդգծվել է առանձին հեղինակների լեզվի ուսումնասիրությունների և հետազոտությունների պակասությունը: Այսպես, օրինակ, պրոֆ. Սեակր իր «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» մեջ ասում է. «...մեզանում անթույլատրելի քիչ ուշադրության է արժանացել մեր զրականության լեզվի ուսումնասիրությունը...», մի այլ տեղ «...մենք՝ (լեզվաբաններս—Լ. Մ.) մեր հրատապ խնդիրը պետք է համարենք հայ հեղինակների լեզվի ուսումնասիրությունը»¹:

Ավ. Իսահակյանի լեզվի ուսումնասիրությունը համեմատաբար լավ վիճակում է: Նրա բանաստեղծությունների լեզվի ամբողջական ուսումնասիրությանն են նվիրված Խ. Կանայանի² և Վ. Առաքելյանի³ մենագրությունները: Սակայն զրանցում առաջադրված պրոբլեմների հիման վրա է՝ ալնի պարզ և զգացվում այս հարուստ նյութի մանրամասն, ես կասեր՝ «լսորոտորային» վերլուծությունների անհրաժեշտությունը:

Առանձին զրական ստեղծագործությունների հետազոտությունն ունի շատ կարևոր սուբյեկտություններ և թույլ է տալիս դիտել որոշ այնպիսի երևույթներ, որոնք ծավալուն նյութի մեջ ցրված լինելով՝ ասես թե հալչում են նրա մեջ: Իհարկե, չպետք է մոռանալ, որ ամեն մի հեղինակի երկերը իրար հետ սերտորեն կապված են, որ մեկը օգնում է հասկանալու և գնահատելու մյուսին: Բայց դա բոլորովին էլ չի նշանակում չնկատել առանձին երկի ինքնագոյությունը, նրա կառուցվածքի տարրերի բարդ փոխհարաբերությունները, պայմանավորվածությունները և օրինաչափությունները:

Զբաղվելով Ավ. Իսահակյանի «Արու-Լալա Մահարի» պոեմի ուսումնասիրությամբ, ուզում եմ մի քանի դիտողություններ անել նրա բառապաշարի մասին:

Ովքեր քիչ թե շատ զբաղվել են Իսահակյանի ստեղծագործություններով, մասնավորապես «Արու-Լալա Մահարի» պոեմով, հիանում են նրա լեզվի հարստությամբ, ճկունությամբ, բազմերանգությամբ, թարմությամբ, ուժով և թափով:

Այս հոգվածում կիրթծենք, ըստ հնարավորին, օրյկկտիվորեն բնորոշելու և գնահատելու տվյալ երևույթի մի քանի առանձին գծերը՝ հենվելով պոեմի բա-

1 Գ. Սեակր, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 125—126:

2 Խ. Կանայան, Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների լեզուն, Երևան, 1940:

3 Վ. Առաքելյան, Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Երևան, 1954:

առաջադարձի թվա-իմաստային (arithmo-semantique)⁴ վերլուծության առաջին արդյունքների վրա:

Սկսենք տեքստի բառերի «բաշխողական (դիստրիբուտիվ) ֆունկցիայի» վերլուծումից: Այդ ֆունկցիան բացառիկ հետաքրքրություն է. ներկայացնում բառապաշար հետազոտողի համար, քանի որ այն արտացոլում է տեքստի որոշ ընդհանուր, կրկնվող օրինաչափությունը, միաժամանակ ցույց տալով նրա մի քանի սպեցիֆիկ դժերր:

Եթե կազմենք պոեմի բոլոր բառերի ցուցակը, դասավորելով դրանք ըստ բացարձակ հաճախականության (ամենահաճախականից մինչև հազվագյուտ բառերը), ապա ցուցակի սկզբում կլինի ամենաբարձր հաճախականություն ունեցող մի բառ, իսկ վերջում՝ մեկ անգամ օգտագործված բառերի մի մեծ քանակություն: Դա բոլոր տեքստերի բառապաշարի բաշխողական ֆունկցիաների ընդհանուր գիծն է: Բառի հաճախականությամբ և կարգի (ցուցակի մեջ գրաված տեղի) միջև հաստատված են որոշ մաթեմատիկական հարաբերություններ, որոնցից ամենակարևորը հետևյալն է. $p_i \cdot i = C$, այսինքն՝ հավանականության և $(-i)$ աստիճանի բարձրացած կարգի արտադրյալը հաստատուն մեծություն է. հավանականության փոխարեն վերցվում է հարաբերական հաճախականությունը, որը բացարձակ հաճախականության և տեքստի երկայնության հարաբերությունն է: $(-i)$ -ն փոխվում է տեքստից-տեքստ: Այս բանաձևը գրաֆիկորեն արտահայտվում է հավասարակողմ հիպերբոլայով, իսկ համապատասխան լոգարիթմային պատկերացում՝ ձախից աջ իջնող ուղիղ գծով, որը հորիզոնական առանցքի հետ սուր (45°) անկյուն է կազմում:

Սակայն կոնկրետ տեքստի էմպիրիկ գրաֆիկական արտահայտությունը ոչ թե հիպերբոլայով է ներկայացված, այլ հիպերբոլիկ մերձավորությամբ (ապրոքսիմացիա) բեկյալ գծով, որի անկման բնույթը արտացոլում է տվյալ տեքստի բառապաշարի կառուցվածքը:

Իսահակյանի պոեմում օգտագործված են 1242 տարբեր բառեր, որոնք իրենց բոլոր կրկնություններով կազմում են 3328 բառերի երկայնության տեքստ: Այդ երկու մեծությունների հարաբերությունից $\left(\frac{3328}{1242}\right)$ ստանում ենք այսպես կոչված «կրկնության ցուցիչ (ինդեքս)»: Իսահակյանի մոտ այն չափազանց ցածր է — 2,68: Ասում եմ «չափազանց», որովհետև ավելի ճշգրիտ համեմատելու համար ո՛չ հայերենի ընդհանուր բառապաշարի և ո՛չ էլ առանձին գրողների կողմից օգտագործված բառապաշարի հարստության մասին տվյալներ չկան: Նշենք միայն, որ «Լիլիթ» պատմվածքում այս ցուցիչը 3,57 է, չեխ գրող Կարել Զապեկի մոտավորապես նույն ծավալի վիպակում՝ 56 և ընդհանրապես գեղարվեստական գրականության մեջ՝ մոտավորապես 6:

Բառապաշարի հարստության մասին խոսելիս անհրաժեշտ է նկատի ունենալ այս երևույթի երկու կողմերը, որոնք արտացոլում են լեզվի մեջ գոյություն ունեցող երկու տենդենցները: Մեկը՝ ձգտումը դեպի լեզվական տարրերի

⁴ Հոդվածում օգտագործվում են պրոֆ. Գիրոյի մշակած տերմինները (P. Guiraud, Les caracteres statistiques du vocabulaire, Paris, 1934):

⁵ L. Motalova, K stylistickemu vyzniti slovní zaroby (Lexikalne—stylistický rozbor prozvy A. Isahakjana „Lilith“) (դիվյունային աշխատանք՝ պաշտպանված 1939 թ. Պրագայի համալսարանում):

⁶ M. Těsítelova, Frekvence slov a tvaru ve spise „Život a dílo skladatele Folta na“ rd K. Čapka, Naše řeč 31, 1948, էջ 126—130:

կրկնությունը, որով պայմանավորված է խոսքի հասկանալիությունը (չէ՞ որ ամեն մի անծանոթ ծածկագրի ընթերցումը սկսվում է ամենահաճախ կրկնվող տարրերի բնորոշումից և ղրանց լմբոնումից): Մյուսը՝ ամեն խոսողի, մանավանդ գրողի՝ ձգտումը ամեն մի երևույթ, իր, դրացում, գույն և այլն նշանակել առանձին բառով, հետևապես՝ օգտվել ըստ հնարավորին հարուստ և բազմերանգ բառապաշարից: Երկրորդը իր մեջ տեքստը անհասկանալի և անսովոր դարձնելու որոշ վտանգ ունի. և մեզ թվում է, թե Խոսակյանը մոտենում է բառապաշարը հարստացնելու հնարավոր սահմաններին, համենայն դեպս ուսումնասիրված պոեմում (ընթերցողների հարցափորձից պարզվում է, որ անսովոր, նույնիսկ անհասկանալի բառերի թիվը տատանվում է 5-ի և 25-ի միջև):

Ընդունված է բառերի բաշխողական կառուցվածքը բնորոշել նաև ուրիշ երկու չափանիշներով: Ընդամենը կլինեն ասել՝ երեքով. սակայն ղրանցից մեկը՝ տեքստի բառապաշարի էքստենսիվությունը հնարավոր չէ որոշել առանց լեզվի ընդհանուր, այսպես կոչված «նորմալ» բառապաշարի մասին տվյալներ ունենալու, տվյալներ, որոնք ստացվում են հալարավոր, նույնիսկ միլիոնավոր բառերի ուսումնասիրությունից: Այդպիսի աշխատանքներ մի շարք լեզուների նկատմամբ (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, ռուսերեն, չեխերեն և այլն) կատարված են, իսկ հայերենի նկատմամբ՝ ոչ: Երկու ուրիշ չափանիշները, բառապաշարի ցրումը (դիսպերսիան) և խտացումը (կոնցենտրացիան), գոնե նրանց բացարձակ արժեքները, հնարավոր է որոշել կոնկրետ տեքստի վերլուծության հիման վրա:

Այս չափանիշները օգնում են բառապաշարի կառուցվածքը բնութագրել առանց անմիջական հաճախականական տվյալներից օգտվելու, քանի որ տեքստի բացարձակ հաճախականությունները խիստ տատանվում են (պոեմում, օր.՝ 161-ից մինչև 1, ընդամենը՝ 31 տեսակ, «Լիլիթ» պատմվածքում՝ 265-ից մինչև 1, ընդամենը 43 տեսակ), ուրեմն՝ ղրանից ստացված պարզ միջին թիվը (պոեմի նկատմամբ, օր., 40,06) մեզ քիչ բան է ասում:

Բարձր ցրումով բառապաշար կունենա այն տեքստը, որի մեջ տվյալ սահմանափակ տարածության վրա առավելագույն չափով տարբեր բառեր են օգտագործված. իսկ բարձր խտացումով՝ այն տեքստը, որի մեջ զգացվում է օգտագործված բառերից մի քանիսը կրկնելու տենդենց: Կան միատարր տեքստեր, որտեղ այդ երկու չափանիշները պարզապես արտացոլում են նույն երևույթի երկու կողմերը՝ բարձր ցրումը ուղեկցում է ցածր խտացումով կամ ընդհակառակը. սակայն դա ընդհանուր օրինաչափություն չէ, ինչպես ցույց է տալիս նաև մեր տեքստի ուսումնասիրությունը:

Բառապաշարի խտացումը բնութագրված է հետևյալ բանաձևով.

$$C = \frac{\sum_{i=1}^N n_i}{N}, \text{ այսինքն՝ առաջին հիսուն ամենահաճախ կրկնվող բառերի բացարձակ հաճախականությունների դումարի և տեքստի երկայնության մեծության (բառերը բոլոր իրենց կրկնություններով միասին վերցրած) հարաբերությամբ.}$$

$$\text{«Աբու-Հալա Մահարի» պոեմից ստանում ենք } - \frac{1075}{3328} = 0,32, \text{ որը պրոֆ. Գիրոյի}$$

հաստատած նորմայի (0,09)² համեմատությամբ տալիս է +0,23 տարբերությունը:

² P. Guiraud, նշված աշխատությունը, էջ 51:

Ցուցմը բնութագրված է հետևյալ բանաձևով. $R = \frac{1}{N}$ այսինքն՝ տեքստի տարրերի բառերի քանակության և այդ նույն տեքստի երկայնությունից հանված արմատի հարաբերությամբ: Դա պոեմի համար $\frac{1242}{3328} = 21,41$ կլինի, որը, նորմայի (20,50)⁶ համեմատությամբ տալիս է $-0,91$ տարբերությունը: Այսպիսով, տեքստի ցրման՝ նորմայից ունեցած գրական տարբերությունը ավելի բարձր է քան խտացմանը:

Մեր տեքստի բառապաշարի կառուցվածքի համար հաստատված այս երկու օբյեկտիվ չափանիշների բարձր աստիճանով պայմանավորված են հետագա ուսումնասիրությունների երկու հիմնական ուղղությունները. մի կողմից՝ հետաքրքրությունը դեպի ամենահաճախ կրկնվող բառերը, որոնք զետեղված են հաճախականական ցուցակի սկզբում: Մյուս կողմից՝ դեպի հազվագյուտ բառերը, որոնք գտնվում են նույն ցուցակի վերջին մասում: Այսպիսով, մենք ընդգրկելու ենք ուսումնասիրված տարրերի ճնշող մեծամասնությունը, մի բան, որը մեթոդոլոգիական կարևոր առավելություն է ներկայացնում:

Սկսենք պոեմում գոյություն ունեցող բառապաշարի շերտերի (զոտիների, zones) որոշումից և բնութագրումից:

Հաճախականության ցուցակների սկզբնամասերը (առաջին տեղերը) համընկնում են ոչ միայն տվյալ լեզվի բոլոր տեքստերում (ևթե, իհարկե, նրանք կարևոր երկայնություն ունեն), այլև հնդեվրոպական լեզուների մեծամասնությունում: Դա հաստատված է անգլերենի, գերմաներենի, ֆրանսերենի, իսպաներենի նյութերի հիման վրա և զուգադիպում է շեխերենից ստացված տվյալների հետ, ինչպես նաև հայերենի նկատմամբ մինչև այժմ ստացված արդյունքների հետ: Հաճախականության ցուցակների սկզբնամասերի համընկնումը որոշ իմաստով նմանեցնում է հայերենը հիշած լեզուներին, հետևաբար՝ մի շարք համեմատությունների հիմք է տալիս. դրանով էլ ստուգվում է կոնկրետ ուսումնասիրված տեքստի այս տիպի վերլուծման համար բավարար երկայնությունը:

Դիտենք մեր ցուցակի առաջին 153 բառը (կարգ՝ 1-ից մինչև 27, բացարձակ հաճախականությունները՝ 161-ից մինչև 5): Դրանք օգտագործված բառերի միայն 13 տոկոսն են կազմում, իսկ ամբողջ տեքստի՝ 52 տոկոսը, այսինքն՝ կեսից քիչ ավելին: Այստեղ (ինչպես նաև ուրիշ տեքստերում) կարևոր գեղ է կատարում այսպես կոչված կառուցվածքային բառերի կամ «բառ-գործիքներ» (les mots-outils) շերտը: Հիշյալ տերմիններով նշանակում ենք հոդերը, անդերը, դերանունները և բառային, ինքնակա նշանակություն չունեցող մյուս բառերը, որոնք բարձր հաճախականություն ունեն՝ շնորհիվ նրանցից ընտրություն կատարելու խիստ սահմանափակ հնարավորություն: Առաջին կարգից սկսած՝ այս շերտում գտնվում են. և, ու, դու, ես, իմ, որ, մեջ, մի, նա, նրա, ինչ, վրա, դեպի և այլն: (Ամբողջ տեքստում այս տիպի 114 բառ կա:

⁶ նույն տեղում, էջ 53:

⁷ Մանրամասն տվյալները տե՛ս նշված դիպլոմային աշխատանքում:

Ոճաբանական տեսակետից այս բառերը պակաս հետաքրքրական չեն, բայց առաջով հնարավորություն չունենք դրանք ավելի մանրամասն վերլուծել. նշենք միայն, որ շնայած այս կարգի բառերի բարձր հաճախականությանը, տեքստում, այնուամենայնիվ, դերագանցում են իմաստով անկախ բառերը):

Օժանդակ բառերը առանձնացնելուց հետո մենք են այսպես կոչված «ուժեղ բառերը» (les mots-forts—գոյական, բայ, սծական, մակբայ), որոնք նույնպես ըստ շերտերի կարելի է դասավորել: Ցուցակի՝ մեր ընտրած առաջին մասում կլինեն հիմնական, անհրաժեշտ, ոճաբանորեն չեզոք, իմաստային մեծ ծավալ և բովանդակային փոքր ընդգրկում ունեցող բառեր, առաջին հերթին բայեր, օր.՝ լիսել, գնալ, լսել, նայել, տալ, ունենալ, խոսել, տանել, զալ և այլն, որոնք անհրաժեշտ են միտք արտահայտելու համար և համեմատելի են մաթեմատիկական բանաձևերի հաստատուն մեծությունների հետ:

Դրանցից որոշ չափով տարբերվում են ընդհանուր բառապաշարի տեսակետից պատահական, բայց տվյալ տեքստի տեսակետից անհրաժեշտ բառերը, որոնք կարող ենք համեմատել պարամետրերի հետ: Նրանք պայմանավորված են տեքստի թեմայի և բովանդակության այս կամ այն տարրով:

Մարդ, բանաստեղծ, ընկեր, կին, ազգ, աշխարհ բառերը տեքստի սուբյեկտների և օբյեկտների մասին են հայտնում:

Հոգի, գլուխ, սիրտ—որոշ չափով սուբյեկտների հոմանիշներն են:

Փառավան, ուղտ, ուղի, նամբե, Բայլ, թոշել, անցնել, Բայլել, թողնել, վազել, սլանալ, անհուն, անծայր, անծիր, անհայտ...—կապված են իրադրության վանագան հանդամանքների հետ:

Անապատ, դաշտ՝ դործողության տեղի հետ:

Օրենք, իշխանություն, իրավունք, ազատություն...՝ հերոսի փիլիսոփայական խոհերի հետ, իսկ ատել, սիրել, լալ, փախչել, հասնել, բարի, չար...՝ նրա զգացմունքների հետ:

Արև, աստղ, հողմ, փոշի, ալբյուր, զագան, ամպ, ավազ՝ բնության նկարադրությունների հետ և այլն:

Այդ բառերի իմաստային բովանդակությունը նախորդների համեմատությամբ ավելի մեծ է, իսկ ծավալը՝ ավելի փոքր: Նրանք հարուստ են ոճաբանական բազմազան ցուցանիշներով և հնդինակի աշխարհայեցողությունն ընկալելու և դնահատելու առումով ճանաչողական մեծ արժեք ունեն:

Նշենք ցուցակի այս մասի մի քանի առանձնահատկությունը.

1. Բայերի թվի համեմատությամբ գոյականների ակնհայտ գերազանցությունը (53:26).

2. Ածականների համեմատաբար մեծ թիվը (26), որը պայմանավորված է մակդիրների հարստությամբ¹⁰:

3. Ցուցակի նույնիսկ այս մասում հոմանիշային շղթաների գոյությունը (ուղի-ճամփեք, չքնաղ-չքեղ, շար-վատ, վառ-պայծառ, միշտ-հավիտյան-հավերժ և այլն), որը զարմանալիորեն հարուստ բառապաշարի մասին է վկայում:

10 Այս երկու դեպքեր հաստատված են նաև «Լիլիթ» պատմվածքի բառապաշարի համար, տե՛ս նշված դիպլոմային աշխատանքը:

4. Զգացմունքային կոնֆլիկտների բացահայտ լարվածության արտացոլումը բառապաշարի մեջ (հոգի, սիրտ, սեր, համբույր, արգունք, գիրկ, ատել, սիրել, հարբեցնել, անուշ, դաժան, մայրական, մեղմ...):

Մի քանի խոսք ասենք այսպես կոչված «սիրված բառերի» հարցի մասին: Թվում է թե այդ արտահայտության տակ պետք է հասկանալ ամենահաճախակի բառերը: Այնինչ, Ավետիք Իսահակյանի լեզվի ոչ բոլոր ուսումնասիրողներն են «սիրված բառեր» արտահայտությունը օգտագործում այս իմաստով: Այսպես, Խ. Կանայանը այդ արտահայտությամբ նշանակում է ոչ միայն հաճախ օգտագործվող, այլև հազվագեղ, անսովոր և նույնիսկ նորաստեղծ բառերը: Այսպես, սիրված բառերի նրա ցուցակներից բարձր հաճախականություն ունեցող բառերի համար¹¹ մեր կազմած ցուցակի հետ համընկնում են սեր և սիրտ բառերը: «Սիրված բառերի» մեր ընկալումը կարծես թե ավելի մոտենում է Վ. Առաքելյանի ըմբռնմանը: Հետաքրքրական է նշել, որ «Ծրգեր ու վերքերի» համար կազմած նրա ցուցակի¹² բառերի նշանակալից մասը համընկնում է «Աբու-Նալա Մահարիի» համար կազմած մեր ցուցակի հետ. սիրտ, սեր, աշխարհ, կյանք, ծով, աստղ, վառ, լալ:

Ժողովածուի և պոեմի միջև այս համընկնումը, անկասկած, պատահական է և Վ. Առաքելյանը միանգամայն իրավացի է, երբ որոշ բառերի, հետևաբար՝ նաև պատկերների, չափազանց մեծ կրկնության մեջ տեսնում է որոշ միալարություն:

Սակայն պետք է ընդգծել մի ուրիշ հանգամանք, որը տեքստի շատ կարևոր հատկանիշի մասին է վկայում, բնորոշ լինելով բառապաշարի կառուցվածքին ընդհանրապես:

Պոեմի ամենահաճախ կրկնվող բառերը շնչին բացառություններով (սեր և սիրտ), ինչպես տեսանք, շատ սերտորեն կապված են ստեղծագործության բովանդակության այս կամ այն տարրի հետ, այսինքն՝ նրանց հաճախակի օգտագործումը պատճառաբանված է և հիմնավորված: Դրանցով էլ օբյեկտիվորեն հաստատվում է սուբյեկտիվորեն նկատված, բայց բավական անորոշ արտահայտված քննադատների միտքը պոեմի նյութի և ձևի սթանդերթի ներդաշնակության մասին:

Շարունակելով տեքստի վերլուծությունը՝ մենք կհասնենք հազվադեպ (1—2 անգամ կրկնվող) բառերին, որոնք էլ ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Նրանք կազմում են տեքստի $\frac{1}{3}$ ավելին: Լինելով տարբեր բաների ճշող մեծամասնությունը և, հետևաբար, արտացոլելով հեղինակի բառային ընտրության սպեցիֆիկ գծերը՝ այդ բառերը համեմատելի են մաթեմատիկական բանաձևի անկախ փոփոխական մեծությունների հետ: Հազվագեղ բառերի այդ շերտը բնորոշելուց հետո կարելի էր դրանք իմաստային, ձևաբանական, ստուգաբանական և այլ վերլուծության ենթարկել:

Սակայն դա արդեն առանձին հոդվածի նյութ է:

11 Հ. Կանայան, նշված աշխատությունը, էջ 27—28:

12 Վ. Առաքելյան, նշված աշխատությունը, էջ 141:

Л. Моталова

О ЛЕКСИКЕ А. ИСААКЯНА

Р е з ю м е

В армянской лингвистической литературе неоднократно указывалось на необходимость изучения языка отдельных авторов. В данной статье автор делает попытку путем применения точных математических методов определить некоторые особенности лексики поэмы Исаакяна «Абу-Лала-Маари». Наибольший интерес для исследователя представляет функция дистрибуции слов, так как она отражает некоторые общие, повторяющиеся закономерности текста наряду с указанием его специфических черт.

Подсчитав общее количество слов текста (3328) и соотнеся его к количеству употребленных слов (1242), мы получим «индекс повторения». В поэме он равен 2,68, что является довольно низким показателем и показывает богатство словаря данной поэмы. По данным профессора Гиро для художественного текста он равен примерно 6.

Дистрибуцию слов принято определять двумя другими показателями: дисперсией, определяемой формулой $(R = \frac{V}{N})$ и концентрацией $(C = \frac{\sum_{50}^1}{N})$.

Последовательно анализируя текст по вышеназванным показателям мы дойдем до редко употребляемых слов (1—2 раза), представляющих собой еще больший интерес для характеристики языка данной поэмы.